

HSBC Հայաստանը կազմակերպություններին առաջարկում է սարքավորումների ներմուծման ֆինանսավորում իր երբևէ ամենացածր տոկոսադրույքով

Ժամանակակից սարքավորումների ներմուծումները թույլ են տալիս տեղական ընկերություններին հաստատովել միջազգային շուկայում և լինել մրցունակ՝ համընթաց քայլերով ներկայիս փոփոխվող պայմաններին:

Էյչ-Էս-Բի-Սի-ն աշխարհի խոշորագույն ընկերություններից մեկն է առևտրի ֆինանսավորման ծառայությունների մատուցման ոլորտում: Այն կարևոր դերակատարում ունի միջազգային առևտրի ձևավորման և կազմակերպման գործում 1865թ.-ից ի վեր:

Սարքավորումների ներմուծման ֆինանսավորման համար ս.թ. սեպտեմբերից HSBC Հայաստանը տեղական բիզնեսներին տրամադրում է միջազգային չափանիշներով մրցունակ տոկոսադրույք՝ սկսած 4% տարեկան, մինչև հինգ տարի հետաձգված վճարման հնարավորությամբ: Առևտրի ֆինանսավորման այս եղանակը գործում է բժշկական, ջերմոցային, շինարարական, գյուղատնտեսական, արտադրական հոսքագծերի և այլ սարքավորումների ներմուծման համար:

«Լինելով խոշորագույն առևտրային բանկերից մեկն աշխարհում, որը ներառում է միջազգային առևտրի 90 տոկոսը, մենք հստակ գիտակցում ենք կարևորությունը օգնելու տեղական տնտեսվարողներին հասկանալու միջազգային առևտրի կազմակերպման հնարավորություններն ու ռիսկերը այս հաճախակի փոփոխվող բիզնես միջավայրում», - նշում է Արտակ Պետրոսյանը՝ HSBC Բանկ Հայաստանի առևտրի ֆինանսավորման բաժնի կառավարիչը:

Տեղական ներմուծողները կարող են օգտվել աշխարհի ավելի քան 60 երկրների HSBC խմբի առևտրի ֆինանսավորման փորձագետների աջակցությունից: «Երբ Ձեր բիզնեսը հատում է Հայաստանի սահմանը, Էյչ-Էս-Բի-Սի Բանկը Ձեր կողքին կլինի մյուս կողմում», - վստահեցնում է Արտակ Պետրոսյանը:

Ս.թ. սեպտեմբերի 15-17, HSBC Հայաստանն առևտրի ֆինանսավորման իր գործիքներն ու ծառայությունները ցուցադրեց «Եվրոպան Հայաստանում էքսպո» խորագրով ցուցահանդեսին: Ցուցահանդեսի շրջանակում բանկը ներկայացրեց իր առաջարկը և հնարավորություն ունեցավ առևտրի զարգացմանն ուղղված համագործակցության հեռանկարներ քննարկել Եվրոպական միության երկրների, տեղական գործարարների և ընկերությունների հետ:

Հարցումների դեպքում դիմել **HSBC** Հայաստանի հասարակայնության հետ կապերի
գծով մենեջեր Արմինե Բաբուրյանին,
Հեռախոս՝ + 374 60 655 345 Էլ. փոստ՝ arminebaburyan@hsbc.com

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ն՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբն իր հաճախորդներին ծառայություններ է տրամադրում իր մոտ 3,900 գրասենյակներից, որոնք գտնվում են 67 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2017թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2,492 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC-ն Հայաստանում

Բանկը հիմնադրվել է 1996թ.-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն «Midland Armenia Bank» ԲԸ անվանումով: 1999թ.-ին վերանվանվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարներին: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30,000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 9 գրասենյակների և մոտ 420 աշխատակիցների միջոցով: 2017թ.-ի հունիսի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 215 մլրդ. ՀՀ դրամ: